



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՅԻՒՍՈՒՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY  
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA  
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵԱՑ ՀԱՅՑ. ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՅՈԳԵՒՈՐ ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան Երեքշաբթի, 24 Յունիսին ընդունեց Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Յոգեւոր Եղբայրակցութիւնը Ներկայացնող պատուիրակութիւն մը, որ Ազգ. Առաջնորդարան Եկած էր Առաջնորդ Սրբազնը շնորհաւորելու չորրորդ քառամեակի մը համար Առաջնորդ Վերընտրութեան առիթով: Յանդիպումի մասնակից եղան Ազգ. Առաջնորդարանի քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներ՝ Գերա. S. Միւռոն Շ. Վրդ. Ազնիկեան եւ Յոգէ. S. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

Առաջնորդ Սրբազնը հետաքրքրուեցաւ Եղբայրակցութեան գործունեութեամբ ու ծրագիրներով, միաժամանակ բարձր գնահատելով անոր գործունեութիւնը, որ կը մնայ հաւատարիմ՝ քրիստոնեական հաւատքին ու ազգային արժեքներուն հանդեպ ու ճիգ կը տարուի զանոնք նոր սերունդին փոխանցելու համար:

Պատուիրակութեան անդամները տեղեկութիւններ տուին իրենց տարած աշխատանքին մասին, որ կը տարածուի Լիբանանն մինչեւ մեր ափերը, ընդգծելով, որ Եղբայրակցութեան գործունեութիւնը կը տարուի մեր Եկեղեցւոյ դարաւոր ժառանգութիւններուն ու կանոններուն հաւատարմութեամբ, հեռու՝ մոլորեցնող ազեցութիւններէ:

Յանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազնը 7 Յունիսի Միւռուօրինեցը խորհրդանշող յուշանուերներ յանձնեց պատուիրակութեան անդամներուն, միաժամանակ շեշտելով, որ Ազգ. Առաջնորդարանը պիտի շարունակէ սերտորեն գործակցիլ Եղբայրակցութեան հետ:

### PRELATE WELCOMES A DELEGATION FROM THE ARMENIAN ECCLESIASTICAL BROTHERHOOD

On the morning of Tuesday, June 24<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed a delegation from the Armenian Ecclesiastical Brotherhood who had come to congratulate the Prelate on his re-election to a

fourth term. Christian Education Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian participated in the meeting as well.

The Prelate commended the members for the work they carry out, which involves passing on our Christian faith and national values to the next generation. The delegation reported on their activities, which is in keeping with traditions and canons of our church, and which spans from Lebanon to the Diaspora.

At the conclusion of their meeting the Prelate presented the members with mementos from the Blessing of Holy Muron which took place on June 7<sup>th</sup>, and stressed that the collaboration between the Prelacy and the Ecclesiastical Brotherhood will continue.